ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Հրազդան 26.07.2016թ. ժամը 11^{30}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար <<ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2016/02>> ծածկագրով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Տարոն Գևորգյան *– հանձնաժողովի նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ*

Անդամներ՝

Հասմիկ Հակոբյան *– հանձնաժողովի քարտուղար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ (գնումների համակարգող)*

Ալեքսան Եղիշյան *– հանձնաժողովի բացող անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ*

Արամ Վիրաբյան *- հանձնաժողովի բացող անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ*

Վարդան Քալանթարյան *- հանձնաժողովի գնահատող անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,*

Կամո Բունիաթյան *- հանձնաժողովի գնահատող անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ*

ՕՐԱԿԱՐԳ՝

1.Հայտերի բացման վայրը, օրը, ժամը.

<<ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2016/02>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի միջոցով ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք հասցեում, 2016թ. հուլիսի 26-ին, ժամը 10^{30}:

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.

Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. <<Շինպլյուս>> ՍՊԸ - ք. Երևան, Նանսենի 1
2. <<Մեհեկան>> ՍՊԸ – Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Կոտայքի 2
3. <<Բալահովիտ-1>> ՍՊԸ – Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ

3.Տվյալներ հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ <<Մեհեկան>> ՍՊԸ, <<Բալահովիտ-1>> ՍՊԸ և <<Շինպլյուս>> ՍՊԸ:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1. **<<Մեհեկան>> ՍՊԸ**

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը
1	Հրազդան համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ	66 461 237	7 310 736	14 754 395	88 526 368 /ութսունութ միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար երեք հարյուր վաթսունութ/

4.2 . **<<Բալահովիտ-1>> ՍՊԸ**

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը
1	Հրազդան համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ	70 891 982	7 798 118	15 738 020	94 428 120 /իննսունչորս միլիոն չորս հարյուր քսանութ հազար հարյուր քսան /

4.3. **<<Շինպլյուս>> ՍՊԸ**

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը
1	Հրազդան համայնքի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ	56 300 000	5 067 000	12 273 400	73 640 400 /յոթանասուներեք միլիոն վեց հարյուր քառասուն հազար չորս հարյուր /

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Գնահատող հանձնաժողովն որոշեց.

6.1. Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ <<Շինպլյուս>> ՍՊԸ-ի հայտում բացակայում է հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և պահանջագիրը

6.2.Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ <<Մեհեկան>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակիցը հայտով ներկայացրած մասնագիտական փորձառության մասին հայտարարության մեջ ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2016/02 ծածկագրով բանակցային ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում իրականացված աշխատանքների ընդհանուր արժեքը՝ 12 386 001 /տասներկու միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար մեկ/ ՀՀ դրամ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

6.3. Մերժել <<Շինպլյուս>> ՍՊԸ-ի հայտը <<ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2016/02>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելուց

6.4. Գնահատող հանձնաժողովի գործունեությունը կասեցնել և տվյալ գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար.

գրությամբ դիմել <<Մեհեկան>> ՍՊԸ-ի էլ. հասցեին, մեկօրյա ժամկետում պարզաբանում ներկայացնելու համար:

6.5. <<ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2016/02>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը վերսկսել պարզաբանման համար տրված ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	----------	***Տ.Գևորգյան***
անդամներ՝	----------	***Ա.Եղիշյան***
	----------	***Ա.Վիրաբյան***
	----------	***Վ.Քալանթարյան***
	----------	***Կ.Բունիաթյան***
Քարտուղար՝	----------	***Հ.Հակոբյան***